ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 22-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ք. Երևան

22.03.2024թ.

1. Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 2024 թվականի մարտի 22-ի հերթական նիստին.

ա) մասնակցում էին՝

Գ.Պապոյան – ՀՀ էկոնոմիկայի նախարար, Խորհրդի նախագահ

Ն. Տերյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ, Խորհրդի անդամ

Ա. Հարությունյան - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ, Խորհրդի անդամ

Լ.Նանուշյան - ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ, Խորհրդի անդամ

Ա. Դանիելյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ, Խորհրդի անդամ

Կ.Սահակյան - ԵՊՀ դասախոս, տնտեսագիտական գիտությունների թեկնածու, Խորհրդի անդամ

Է. Էլբակյան - ՀԱՊՀ մինչբուհական կրթության գծով պրոռեկտոր , Խորհրդի անդամ

Ժ.Խառատյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի համակարգման և մեթոդաբանության վարչության պետ

Ա. Կոտոլյան – Տեսչական մարմնի ղեկավար

Ա. Մկրտչյան – Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ

Գ. Սահակյան - Խորհրդի քարտուղար

Ա. Սարգսյան - Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության պետ

Ա.Բաբայան – «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ–ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

բ) բացակայում էին՝

Է. Հակոբյան - ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ, Խորհրդի անդամ

Տ. Քեյան - «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ–ի աջակցության ծրագրերի ղեկավար, Խորհրդի անդամ

Կ. Չիլինգարյան - «Սպառողների խորհրդատվության կենտրոն» նախագահ, Խորհրդի անդամ

Հերթական նիստի օրակարգային հարցեր.

2. Օրակարգում ընդգրկված հարցերն էին՝

1. Նախորդ նիստին տրված հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ քննարկում:
   Զեկուցող՝ Ա.Կոտոլյան

2. Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2023թ. տարեկան հաշվետվության քննարկում:
   Հարցը ներկայացնող՝ Ա.Կոտոլյան

3. Չափման միջոցների ստուգաչափման սակագների, ստուգաչափման պարբերականության, ստուգաչափման գործընթացին վերաբերող հարցերի քննարկում:
   Հարցը ներկայացնող՝ Ա.Կոտոլյան

4. ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի հաջորդ կայանալիք նիստի ամսաթիվը համաձայնեցնելու մասին:
Զեկուցող՝ Ա.Կոտոյան

3. Օրակարգային հարցերի քննարկում.

Տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2024 թվականի մարտի 22-ի երկրորդ հերթական նիստը սկսվեց օրակարգի հաստատմամբ:

Օրակարգի առաջին հարցի զեկուցման համար խոսքի իրավունքը տրվեց Տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոյանին, սակայն նախորդ նիստին տրված հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ քննարկում չծավալվեց՝ հանձնարարականներ չունենալու հիմքով:

Օրակարգի երկրորդ հարցի զեկուցման համար խոսքի իրավունքը կրկին տրվեց Տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոյանին: Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2023թ. գործունեության տարեկան հաշվետվության սահիկաշարը արդեն իսկ քննարկվել էր Հայաստանի Հանրապետության վարչապետի մոտ կայացած նիստի ժամանակ, Գևորգ Պապոյանը առաջարկեց քննարկել վարչապետի կողմից նիստի ժամանակ տրված հանձնարարությունը: Այդ կապակցությամբ Արմեն Կոտոյանը հայտնեց, որ սահիկաշարն արդեն իսկ քննարկվել է Խորհրդի նախորդ նիստի ժամանակ և առաջարկեց քննարկել վարչապետի հանձնարարության շրջանակում՝ ևս մեկ անգամ ներկայացնելով Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2023թ. կատարված աշխատանքների մասին տարեկան հաշվետվությունը:

Հաշվետվության վերաբերյալ իր դիտարկումները ներկայացրեց Գևորգ Պապոյանը՝ նախ և առաջ կարևորելով Տեսչական մարմնի և կատարվող աշխատանքի փիլիսոփայությունը առողջ շուկայական մրցակցային միջավայրի ապահովման հարցում, որն ամենակարևորներից է և պահանջում է երկարատև լուծում, ինչի պատասխանները պետք է տրվեն ամբողջ տարվա ընթացքում: Հարցի հետ կապված առաջարկեց խորհրդի բոլոր անդամներին մտածել այնպիսի մեխանիզմներ, որոնք ավելի ինստիտուցիոնալ լուծումներ կապահովեն առաջացած խնդիրներին:

Երկրորդ դիտարկումը վերաբերվում էր խաղալիքների հարցին, որն անմիջականորեն կապված է երեխաների առողջության հետ: Դիտարկման հետ կապված առաջարկվեց Նարեկ Տերյանին արձագանքել՝ արդյոք ապրիլի մեկից ներմուծող ապրանքների համապատասխանության գնահատման փաստաթղթերի նոր ստանդարտների կիրառման արդյունքում կլուծվի խաղալիքների անվտանգության հարցը:

Երրորդ դիտարկումը վերաբերվում էր այն հարցին, որ դինամիկայի մեջ վարչական տույժերը շարունակաբար ավելանում են, բայց շարունակաբար ավելանում են նաև խախտումները, և եթե գումարի տեսքով տուգանքի նշանակումը արդյունավետ պայքարի միջոց չի հանդիսանում խախտումները նվազեցնելու համար, ապա պետք է մշակել մեխանիզմներ, որոնք կարող են ազդեցություն ունենալ մարդու վարկանիշի վրա՝ խաթարելով տարիների ընթացքում ձեռք բերված բարի համբավը, օրինակ՝ «Մենք տուգանվել ենք թերլիցքավորման համար» ցուցանակ փակցնելը:

Ի պատասխան Գևորգ Պապոյանի առաջին դիտարկման՝ Արմեն Կոտոյանը պարզաբանեց, որ ստուգումների արդյունքում խախտումների թվի շարունակական աճը ոչ թե շուկայի վատ վիճակի, այլ ռիսկերի ճիշտ գնահատման արդյունք է: Երկրորդ դիտարկմանն ի պատասխան Արմեն Կոտոյանն ասաց, որ ապրիլի մեկից սահմանին կիրառվելիք մեխանիզմը՝ ինչպես խաղալիքների, այնպես էլ մնացած ոլորտներում, շատ լավ գաղափար է և բավականին կհեշտացնի Տեսչական մարմնի աշխատանքը:

Վարչական տույժերի աճին վերաբերվող դիտարկմանն ի պատասխան՝ Արմեն Կոտոյանը հայտնեց, որ 2021-2023թթ. կատարվել են օրենսդրական փոփոխություններ, որոնց արդյունքում տեղի են ունեցել վարչական պատասխանատվության մեխանիզմների փոփոխություններ, որոնք էլ իրենց հերթին հանգեցրել են վարչական տույժերի չափի մեծացմանը:

Արմեն Դանիելյանը առաջարկում է, հիմք ընդունելով վարչապետի հանձնարարականը, Տեսչական մարմնի համար սահմանել թիրախ, համաձայն որի տարեվերջում պետք է գնահատվի Տեսչական մարմնի գործունեությունը:

Ի պատասխան Գևորգ Պապոյանն առաջարկեց աշխատանքային կարգով հավաքագրել այն արդյունքային ցուցանիշները, որոնք լավագույնս կբնորոշեն Տեսչական մարմնի աշխատանքը, ցուցանիշներ, որոնց հետևից պետք է գնա գործադիր մարմինը՝ այսպիսով այն սահմանելով հաջորդ նիստի օրակարգային հարց:

Օրակարգի երրորդ հարցը՝ չափման միջոցների ստուգաչափման սակագների, ստուգաչափման պարբերականության, ստուգաչափման գործնթացին վերաբերող խնդիրները քննարկման ներկայացրեց Արմեն Կոտոյանը: Նա ասաց, որ հարցը նախորդ Խորհրդի նիստի ժամանակ մի քանի բառով ներկայացվել է, և Խորհրդի նախագահը առաջարկել է այն տեղափոխել հաջորդ նիստի օրակարգ: Չափման միջոցների ստուգաչափման սակագների և ստուգաչափման պարբերականության ուսումնասիրության արդյունքում, ինչպես նաև տնտեսավարողների կողմից ներկայացրած բողոքների հիման վրա, Արմեն Կոտոյանը կարևորեց դրանք վերանայելու անհրաժեշտությունը: Մասնավորապես, չափման համար նախատեսված ապակյա ծավալային տարաների /կոլբաների/ ստուգաչափման համար սահմանված մեկ տարվա պարբերականությունը փոփոխել և սահմանել երեք տարի, քանի որ այն լրացուցիչ բեռ է հանդիսանում և խնդիր է դառնում տնտեսավարողների համար: Հաջորդ խնդիրը կապված է ավտոմոբիլային և դիզելային վառելիքի համար նախատեսված չափման միջոցների /ծավալային տարաների/ ստուգաչափման սակագների հետ, որը շատ բարձր է՝ ավելին է, քան բաշխիչ աշտարակների ստուգաչափման համար սահմանված սակագինը: Առկա են նաև բողոքներ ստուգաչափում կատարող անձանց գործուղման համար սահմանված գումարների չափի վերաբերյալ, ինչը վճարում է տնտեսավարող սուբյեկտը՝ անկախ այդ տարածաշրջանում ստուգաչափման միջոցների վայրերի քանակի, իսկ վճարումները կատարվում են յուրաքանչյուր վայրի համար առանձին: Խնդրի լուծման անհնարինության մասին հակադարձեց Խորհրդի նիստին հրավիրված «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ–ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ալբերտ Բաբայանը:

Տեսչական մարմնի Կառավարման խորհրդի հաջորդ հերթական նիստի անցկացման օրը որոշվեց աշխատանքային կարգով համաձայնեցնել Խորհրդի անդամների հետ /2024թ. ապրիլի վերջ կամ մայիսի սկիզբ/:

Խորհրդի նախագահ՝

_____ Գ.Պապոյան
ստորագրություն

Խորհրդի քարտուղար՝

_____ Գ.Սահակյան
ստորագրություն